

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 






## ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

## Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

|                                                 |                                                                                               |                                                                                       |                                |
|-------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------|--------------------------------|
| <b>Աշոտ Օսիպյան</b><br>(անուն, ազգանուն)        | <b>Վարչության նախագահ,<br/>Գործադիր տնօրեն</b><br>(պաշտոն)                                    |     | <b>15.02.2016</b><br>(ամսաթիվ) |
|                                                 |                                                                                               |                                                                                       |                                |
| <b>Դավիթ Հարությունյան</b><br>(անուն, ազգանուն) | <b>Վարչության անդամ,<br/>Գործադիր տնօրենի տեղակալ</b><br>(պաշտոն)                             | (ստորագրություն)                                                                      | <b>15.02.2016</b><br>(ամսաթիվ) |
| <b>Բագրատ Ճգմաչյան</b><br>(անուն, ազգանուն)     | <b>Վարչության անդամ,<br/>Գործադիր տնօրենի տեղակալ</b><br>(պաշտոն)                             |   | <b>15.02.2016</b><br>(ամսաթիվ) |
| <b>Տիգրան Գալստյան</b><br>(անուն, ազգանուն)     | <b>Վարչության անդամ,<br/>Գլխավոր հաշվապահ</b><br>(պաշտոն)                                     |   | <b>15.02.2016</b><br>(ամսաթիվ) |
| <b>Սուրեն Կարապետյան</b><br>(անուն, ազգանուն)   | <b>Վարչության անդամ,<br/>Կորպորատիվ<br/>գործառնությունների<br/>վարչության պետ</b><br>(պաշտոն) |   | <b>15.02.2016</b><br>(ամսաթիվ) |
| <b>Զարուհի Մելքոնյան</b><br>(անուն, ազգանուն)   | <b>Վարչության անդամ,<br/>Միջազգային<br/>գործառնությունների<br/>վարչության պետ</b><br>(պաշտոն) |  | <b>15.02.2016</b><br>(ամսաթիվ) |
| <b>Կարեն Հակոբյան</b><br>(անուն, ազգանուն)      | <b>Վարչության անդամ,<br/>Իրավաբանական<br/>վարչության պետ</b><br>(պաշտոն)                      |   | <b>15.02.2016</b><br>(ամսաթիվ) |

**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ**  
**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԸ**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

## ԱԿՏԻՎՆԵՐ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Բանկի ակտիվները կազմել են 132,639,723 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 5,723,510 հազ. ՀՀ դրամով կամ 4.14%-ով, իսկ 30.09.2015թ. համեմատ՝ աճել են 6,859,318 հազ. ՀՀ դրամով կամ 5.45%-ով:

2015 թվականի չորրորդ եռամսյակի ավարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի ակտիվների նվազումը հիմնականում պայմանավորված է եղել՝ ՀՀ կենտրոնական բանկում կանխիկ դրամական միջոցների և մնացորդների՝ 6,196,317 հազ. ՀՀ դրամով կամ 14.9%-ով և Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ 279,580 հազ. ՀՀ դրամով կամ 1.8%-ով նվազմամբ:

2015 թվականի չորրորդ եռամսյակի ավարտին նախորդ եռամսյակի համեմատ, Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է եղել ՀՀ կենտրոնական բանկում կանխիկ դրամական միջոցների և մնացորդների՝ 5,764,216 հազ. ՀՀ դրամով կամ 19.5%-ով, Հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների՝ 2,480,742 հազ. ՀՀ դրամով կամ 3.9%-ով և Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ 3,194,149 հազ. ՀՀ դրամով կամ 26.7%-ով ավելացմամբ:

### Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների մնացորդները կազմել են 66,082,171 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 95,327 հազ. ՀՀ դրամով կամ 0.1%-ով, իսկ 30.09.2015թ. համեմատ աճել են՝ 2,480,742 հազ. ՀՀ դրամով կամ 3.9%-ով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրվել է 49,853,790 հազ. ՀՀ դրամի վարկ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ընթացքում՝ 34,583,863 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և գերակշռող մասը դասակարգված են որպես ստանդարտ վարկեր, որի հիման վրա կարելի է կարծիք կազմել վարկային ռիսկի կառավարման բարձր մակարդակի մասին:

### Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին Բանկի վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների մնացորդները կազմել են 15,144,701 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 279,580 հազ. ՀՀ դրամով կամ 1.8%-ով, իսկ 30.09.2015թ. համեմատ աճել են 3,194,149 հազ. ՀՀ դրամով կամ 26.7%-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի կողմից պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալը կազմել է 46,220,778 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 30,610,837 հազ. ՀՀ դրամի դիմաց:

## Արտարժութային գործառնություններ

Հաշվետու ժամանակահատվածում Բանկի արտարժութային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 200,717.9 հազ. ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 6,435,675.4 հազ. ՌԴ ռուբլի,

Եվրոյով գործարքների ծավալը՝ 47,464.3 հազ. Եվրո:

Վերը նշված արտարժութային գործառնություններից հաշվետու եռամսյակում ստացված զուտ եկամուտը կազմել է 204,443 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 320,662 հազ. ՀՀ դրամի դիմաց:

## Պարտավորություններ

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 110,156,428 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 6,537,410 հազ. ՀՀ դրամով կամ 5.6%-ով, իսկ 30.09.2015թ. համեմատ աճել են՝ 6,715,335 հազ. ՀՀ դրամով կամ 6.5%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորված է Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների՝ 463,151 հազ. ՀՀ դրամով կամ 0.9%-ով և Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների՝ 7,432,430 հազ. ՀՀ դրամով կամ 11.4%-ով նվազմամբ:

30.09.2015թ. համեմատ, պարտավորությունների աճը՝ 6,715,335 հազ. ՀՀ դրամով կամ 6.5%-ով, հիմնականում պայմանավորված է Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների՝ 6,305,864 հազ. ՀՀ դրամով կամ 12.3%-ով և Բանկի կողմից թողարկված արժեթղթերի՝ 531,473 հազ. ՀՀ դրամով կամ 19.0%-ով նվազմամբ:

## Ընդհանուր կապիտալ

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 22,483,295 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 813,900 հազ. ՀՀ դրամով կամ 3.8%-ով, իսկ 30.09.2015թ. համեմատ՝ 143,983 հազ. ՀՀ դրամով կամ 0.6%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է 2015 թվականի գործունեության արդյունքում ձևավորված՝ 953,395 հազ. ՀՀ դրամ շահույթի հաշվին:

30.09.2015թ. համեմատ, Բանկի ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է հաշվետու ժամանակահատվածում ձևավորված՝ 65,103 հազ. ՀՀ դրամ շահույթի և վերագնահատման պահուստների աճով:

## Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտները նվազել են 112,883 հազ. ՀՀ դրամով կամ 4.3%-ով՝ կազմելով 2,499,290 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տոկոսային եկամուտների զգալի մասը բաժին է ընկնում Բանկի ընթացիկ հաշիվներից, Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից ստացված տոկոսային եկամուտներին (45,619 հազ. ՀՀ դրամ կամ 1.8%), Հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից՝ (2,060,061 հազ. ՀՀ դրամ կամ 82.4%), Պարտքային արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտներին (314,005 հազ. ՀՀ դրամ կամ 12.6%) ու Ռեպո պայմանագրերից ստացված տոկոսային եկամուտներին (74,742 հազ. ՀՀ դրամ կամ 3.0%):

Հաշվետու եռամսյակում, Բանկի եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարումներից ստացված զուտ եկամուտները կազմել են 109,677 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 31,713 հազ. ՀՀ դրամով կամ 22.4%-ով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է 2015 թվականի չորրորդ եռամսյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

| հազ. ՀՀ դրամ                                                  | 2015 թվականի<br>4-րդ եռամսյակ | 2014 թվականի<br>4-րդ եռամսյակ |
|---------------------------------------------------------------|-------------------------------|-------------------------------|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ                               | 2,499,290                     | 2,612,173                     |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր                                   | -1,365,831                    | -1,307,195                    |
| <b>Զուտ տոկոսային եկամուտ</b>                                 | <b>1,133,459</b>              | <b>1,304,978</b>              |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ                     | 278,404                       | 256,350                       |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր                         | -168,727                      | -114,960                      |
| <b>Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ</b>                         | <b>109,677</b>                | <b>141,390</b>                |
|                                                               |                               | 17                            |
| Եկամուտ շահաբաժիններից                                        |                               |                               |
| Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից                    | 238,086                       | 502,170                       |
| Այլ գործառնական եկամուտ                                       | 136,550                       | 137,802                       |
| Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին | -329,416                      | -600,304                      |
| Ընդհանուր վարչական ծախսեր                                     | -920,472                      | -951,346                      |
| Այլ գործառնական ծախսեր                                        | -231,188                      | -229,933                      |
| <b>Շահույթ/(վնաս) հարկումից առաջ</b>                          | <b>136,696</b>                | <b>304,774</b>                |
| Շահութահարկի գծով ծախս                                        | -71,593                       | -202,773                      |
| <b>Շահույթ հարկումից հետո</b>                                 | <b>65,103</b>                 | <b>102,001</b>                |



Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 1,365,831 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել են 58,636 հազ. ՀՀ դրամով կամ 4.5%-ով: Ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում Բանկի ընթացիկ հաշիվների՝ Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդների և վարկերի դիմաց կատարված ծախսերին (699,638 հազ. ՀՀ դրամ կամ 51.2%), Հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց կատարված տոկոսային ծախսերին (558,832 հազ. ՀՀ դրամ կամ 40.9%), Ռեպո պայմանագրերի դիմաց կատարված տոկոսային ծախսերին (33,498 հազ. ՀՀ դրամ կամ 2.5%) և Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց կատարված տոկոսային ծախսերին (58,153 հազ. ՀՀ դրամ կամ 4.3%):

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի ընդհանուր վարչական ծախսերն նվազել են 30,874 հազ. ՀՀ դրամով կամ 3.2%-ով՝ կազմելով 920,472 հազ. ՀՀ դրամ:

### **Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ**

Հաշվետու եռամսյակի արդյունքներով, Բանկը ձևավորել է 65,103 հազ. ՀՀ դրամի զուտ շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 102,001 հազ. ՀՀ դրամ շահույթի դիմաց:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները՝ բերված տարեկանի, կազմել են՝

ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 0.73%,

ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 4.34%:

Հաշվետու եռամսյակի 65,103 հազ. ՀՀ դրամ շահույթի ձևավորման արդյունքում մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 51.0 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 79.8 ՀՀ դրամի դիմաց:

### **Ծառայություններ և հաճախորդներ**

Հաշվետու եռամսյակում Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալները, որոնք իրենց արդյունքներով արտացոլվում են Կոմիսիոն և այլ եկամուտների տեսքով ստացված զուտ եկամուտներում, կազմել են 109,677 հազ. ՀՀ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի՝ 141,390 հազ. ՀՀ դրամի համեմատ:

Վճարահաշվարկային գործառնությունների ծավալային աճ ապահովող ծառայություններից է հանդիսանում կոմունալ վճարումների հավաքագրումը, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 620 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 3,851,951 հազ. ՀՀ դրամ:

2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ակտիվ հաճախորդների թվաքանակը կազմել է 117,232, որը 2014 թվականի դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 3,950-ով:

**Միջազգային դրամական փոխանցումներ**

Հաշվետու եռամսյակում միջազգային դրամական փոխանցումների համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 68,685,407 հազ. ՀՀ դրամին համարժեք գումար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 75,597,708 հազ. ՀՀ դրամին համարժեք գումարի դիմաց:

**Պլաստիկ քարտեր**

Հաշվետու եռամսյակում Բանկի ակտիվ գործող պլաստիկ քարտերի թիվն աճել է 630 հատով, որից 820-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, -253-ը՝ MasterCard և Visa Card միջազգային պլաստիկ քարտերին, 63-ը՝ Diners Club միջազգային պլաստիկ քարտերին:

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի կողմից թողարկված պլաստիկ քարտերի քանակը կազմել է 133,033 հատ:

**Ամփոփ ֆինանսական տվյալներ**

|                                                       | Հազ. ՀՀ դրամ                          |                                       |
|-------------------------------------------------------|---------------------------------------|---------------------------------------|
| <b>Ցուցանիշի անվանումը</b>                            | <b>2015 թվականի<br/>4-րդ եռամսյակ</b> | <b>2014 թվականի<br/>4-րդ եռամսյակ</b> |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 65,103                                | 102,001                               |
| Սեփական կապիտալի միջին մեծություն                     | 22,249,859                            | 21,727,224                            |
| Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %           | 0.29%                                 | 0.47%                                 |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 65,103                                | 102,001                               |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն                  | 129,979,491                           | 126,270,019                           |
| Ակտիվների շահութաբերություն (ROA), %                  | 0.05%                                 | 0.08%                                 |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 65,103                                | 102,001                               |
| Գործառնական եկամուտ                                   | 1,617,772                             | 2,086,357                             |
| Զուտ շահույթի մարժա (NPM), %                          | 4.0%                                  | 4.9%                                  |
| Գործառնական եկամուտ                                   | 1,617,772                             | 2,086,357                             |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն                  | 129,979,491                           | 126,270,019                           |
| Ակտիվների օգտագործման գործակից (AU), %                | 1.24%                                 | 1.65%                                 |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն                  | 129,979,491                           | 126,270,019                           |
| Սեփական կապիտալի միջին մեծություն                     | 22,249,859                            | 21,727,224                            |
| Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)                  | 5.8                                   | 5.8                                   |
| Զուտ տոկոսային եկամուտ                                | 1,133,459                             | 1,304,978                             |
| Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն                  | 80,261,752                            | 85,366,647                            |
| Զուտ տոկոսային մարժա (NIM), %                         | 1.4%                                  | 1.5%                                  |
| Տոկոսային եկամուտ                                     | 2,499,290                             | 2,612,173                             |
| Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն                  | 80,261,752                            | 85,366,647                            |
| Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %               | 3.1%                                  | 3.1%                                  |
| Տոկոսային ծախսեր                                      | 1,365,831                             | 1,307,195                             |
| Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային | 64,874,295                            | 73,685,001                            |

|                                                                                      |          |          |
|--------------------------------------------------------------------------------------|----------|----------|
| <b>Ծախսեր</b>                                                                        |          |          |
| Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, % | 2.1%     | 1.8%     |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո                                | 65,103   | 102,001  |
| Բաժնետոմսերի միջին կշռված թիվը, հազ. Հատ                                             | 1,277.50 | 1,277.50 |
| Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), ՀՀ դրամ                                   | 51       | 80       |
| Սպրեդ, %                                                                             | 1.0%     | 1.3%     |

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով և Բանկի տարեկան բյուջեով սահմանված նպատակային թիրախներով և չափանիշներով ու դիտարկվում են հետևյալ ցուցանիշների փոփոխությամբ.

- Բանկի ընդհանուր ակտիվների մնացորդների շարունակական աճի ապահովում՝ հիմնականում վարկային ներդրումների աճի հաշվին,
- Ժամկետային ավանդների մնացորդների և ցպահանջ ավանդների մնացորդների աճի ապահովում,
- Բանկի հաճախորդների թվի շարունակական աճի, ինչպես նաև սպասարկման որակի բարձրացման արդյունքում նախատեսվում է ստացվելիք կոմիսիոն գումարների աճ,
- Վճարահաշվարկային ծառայությունների, այդ թվում՝ պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալման նպատակով, նախատեսվում է ընդլայնել համագործակցող կազմակերպությունների շրջանակները, ավելացնել Բանկի քարտապանների թիվը, որի ապահովման նպատակով կավելացվի նաև ATM-երի թիվը և տեղաբաշխվածության մակարդակը,
- Նոր մասնաճյուղերի ստեղծում ՀՀ այն տարածաշրջաններում, որտեղ Բանկի մասնաճյուղերի ստեղծումը համարվում է ռազմավարական նշանակություն ունեցող և Բանկի զարգացման համար անհրաժեշտ քայլ,
- Եկամտաբեր ակտիվների ծավալների աճի հաշվին տոկոսային եկամուտների աճ,
- Բանկի կողմից միջնորդական և վճարահաշվարկային ծառայությունների աճի հաշվին ոչ տոկոսային եկամուտների աճ, վերը բերված ցուցանիշների աճի դեպքում կարձանագրվի նաև զուտ շահույթի աճ:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար  
2012 թվականի մարտի 29-ի թիվ 292-Ն հրահանգով

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
Ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 ա)

«31» դեկտեմբերի 2015թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.երևան, Պուշկինի 19

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

| ԱՆՎԱՆՈՒՄԸ                                                  |    | Ընթացիկ միջանկյալ<br>ժամանակաշրջան | Հաշվետու<br>ժամանակաշրջան | Նախորդող<br>ֆինանսական տարվա<br>համադրելի ընթացիկ<br>միջանկյալ<br>ժամանակաշրջան | Նախորդ<br>ժամանակաշրջան |
|------------------------------------------------------------|----|------------------------------------|---------------------------|---------------------------------------------------------------------------------|-------------------------|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ                            | 3  | 2,499,290                          | 10,248,818                | 2,612,173                                                                       | 11,062,999              |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր                                | 3  | (1,365,831)                        | (5,700,843)               | (1,307,195)                                                                     | (4,832,344)             |
| <b>Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</b>                   |    | <b>1,133,459</b>                   | <b>4,547,975</b>          | <b>1,304,978</b>                                                                | <b>6,230,655</b>        |
|                                                            |    | -                                  | -                         | -                                                                               | -                       |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ                  | 4  | 278,404                            | 1,002,288                 | 256,350                                                                         | 987,384                 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր                      | 4  | (168,727)                          | (493,328)                 | (114,960)                                                                       | (390,914)               |
| <b>Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ</b>                 |    | <b>109,677</b>                     | <b>508,960</b>            | <b>141,390</b>                                                                  | <b>596,470</b>          |
|                                                            |    | -                                  | -                         | -                                                                               | -                       |
| Եկամուտ շահաբաժիններից                                     |    | -                                  | 325                       | 17                                                                              | 17                      |
| Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից                 | 5  | 238,086                            | 886,331                   | 502,170                                                                         | 1,257,434               |
| Այլ գործառնական եկամուտներ                                 | 6  | 136,550                            | 555,372                   | 137,802                                                                         | 414,270                 |
| <b>Գործառնական եկամուտներ</b>                              |    | <b>374,636</b>                     | <b>1,442,028</b>          | <b>639,989</b>                                                                  | <b>1,671,721</b>        |
| Զուտ մասհանումներ ակտիվների                                |    | -                                  | -                         | -                                                                               | -                       |
| հնարավոր կորուստների պահուստներին                          | 7  | (329,416)                          | (936,559)                 | (600,304)                                                                       | (740,436)               |
| Ընդհանուր վարչական ծախսեր                                  | 8  | (920,472)                          | (3,461,520)               | (951,346)                                                                       | (3,380,856)             |
| Այլ գործառնական ծախսեր                                     | 9  | (231,188)                          | (837,506)                 | (229,933)                                                                       | (836,975)               |
| Վերահսկվող միավորներում ներդրումներից<br>զուտ շահույթ/վնաս | 10 | -                                  | -                         | -                                                                               | -                       |
|                                                            |    | -                                  | -                         | -                                                                               | -                       |
|                                                            |    | -                                  | -                         | -                                                                               | -                       |
| <b>Շահույթ/ (վնաս) մինչև հարկումը</b>                      |    | <b>136,696</b>                     | <b>1,263,378</b>          | <b>304,774</b>                                                                  | <b>3,540,579</b>        |
| Շահույթահարկի գծով ծախս (փոխհատուցում)                     | 11 | (71,593)                           | (309,983)                 | (202,773)                                                                       | (697,147)               |
| <b>Ժամանակաշրջանի շահույթ</b>                              |    | <b>65,103</b>                      | <b>953,395</b>            | <b>102,001</b>                                                                  | <b>2,843,432</b>        |
| Այդ թվում                                                  |    |                                    |                           |                                                                                 |                         |
| Մայր կազմակերպության բաժնեմաս                              |    |                                    |                           |                                                                                 |                         |
| Չվերահսկվող բաժնեմաս                                       |    |                                    |                           |                                                                                 |                         |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.01.2016թ.



**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 ք)**

«31» դեկտեմբերի 2015թ.

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Զ.ԵՐԵՎԱՆ, ՊՈԼՆԻՍԻՆԻ 19**

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

| ԱՆՎԱՆՈՒՄԸ                                                                   |  | Ընթացիկ միջանկյալ<br>ժամանակաշրջան | Հաշվետու<br>ժամանակաշրջան | Նախորդող<br>ֆինանսական տարվա<br>համադրելի ընթացիկ | Նախորդ<br>ժամանակաշրջան |
|-----------------------------------------------------------------------------|--|------------------------------------|---------------------------|---------------------------------------------------|-------------------------|
| <b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>                                   |  | <b>98,599</b>                      | <b>(174,369)</b>          | <b>(499,225)</b>                                  | <b>(637,192)</b>        |
| Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների<br>վերահաշվարկից |  | -                                  | -                         | -                                                 | -                       |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ<br>վերագնահատումներ               |  | 98,599                             | (174,369)                 | (499,225)                                         | (637,192)               |
| Դրամական հոսքերի հեջավորում                                                 |  | -                                  | -                         |                                                   |                         |
| Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ                            |  | -                                  | -                         |                                                   |                         |
| Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ                                      |  | (19,720)                           | 34,874                    | 99,845                                            | 127,438                 |
| <b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո</b>                    |  | <b>78,879</b>                      | <b>(139,495)</b>          | <b>(399,380)</b>                                  | <b>(509,754)</b>        |
| <b>Համապարփակ ֆինանսական արդյունք</b>                                       |  | <b>143,982</b>                     | <b>813,900</b>            | <b>(297,379)</b>                                  | <b>2,333,678</b>        |
| <b>Այդ թվում՝</b>                                                           |  |                                    |                           |                                                   |                         |
| Մայր կազմակերպության բաժնեմաս                                               |  |                                    |                           |                                                   |                         |
| Չվերահսկվող բաժնեմաս                                                        |  |                                    |                           |                                                   |                         |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.01.2016թ.



**Ենթահավելված 7**  
Հաստատված է  
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի  
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

**Հավելված 7**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի  
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**ֆինանսական վիճակի մասին (ձև թիվ 7)**

**«31» դեկտեմբերի 2015թ.**

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.երևան, Պուշկինի 19**

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

|       | ԱՆՎԱՆՈՒՄԸ                                                                 | Ծանոթագրություններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (չստուգված) | Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված) |
|-------|---------------------------------------------------------------------------|--------------------|--------------------------------------------------------------|------------------------------------------------------|
| 1     | Ակտիվներ                                                                  |                    |                                                              |                                                      |
| 1.1   | Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում              | 13                 | 35,252,038                                                   | 41,448,355                                           |
| 1.2   | Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ                   |                    |                                                              |                                                      |
| 1.3   | Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ          | 14                 | 11,523,218                                                   | 10,883,591                                           |
| 1.4   | Առևտրային մպատակով պահվող ֆինանսական ակտիվներ                             | 15                 |                                                              |                                                      |
| 1.5   | Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ                          | 16                 | 66,082,171                                                   | 65,986,844                                           |
| 1.6   | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ                                 | 17                 | 15,144,701                                                   | 15,424,281                                           |
| 1.7   | Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ                                   | 18                 |                                                              |                                                      |
| 1.8   | Ներդրումներ վերահսկվող ամձանց կառնոնադրական կապիտալում                    | 19                 |                                                              |                                                      |
| 1.9   | Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ                                  |                    | 779,066                                                      | 329,700                                              |
| 1.10  | Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ                                 | 20                 | 2,568,715                                                    | 2,645,065                                            |
| 1.11  | Հետաձգված հարկային ակտիվներ                                               | 3                  | 118,612                                                      | 66,918                                               |
| 1.12  | Այլ ակտիվներ                                                              | 21                 | 1,171,202                                                    | 1,578,479                                            |
|       | <b>Ընդամենը՝ ակտիվներ</b>                                                 |                    | <b>132,639,723</b>                                           | <b>138,363,233</b>                                   |
| 2     | Պարտավորություններ                                                        |                    |                                                              |                                                      |
| 2.1   | Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 22                 | 48,595,300                                                   | 49,058,451                                           |
| 2.2   | Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ                                  | 23                 | 57,566,775                                                   | 64,999,205                                           |
| 2.3   | Բանկի կողմից թողարկված արժեթղթեր                                          | 24                 | 3,323,481                                                    | 1,847,950                                            |
| 2.4   | Առևտրային մպատակներով պահվող պարտավորություն                              | 25                 | -                                                            | -                                                    |
| 2.5   | Վճարվելիք գումարներ                                                       | 26                 | 13,858                                                       | 20,981                                               |
| 2.6   | Հետաձգված հարկային պարտավորություններ                                     | 3                  | -                                                            | -                                                    |
| 2.7   | Պահուստներ                                                                | 30                 | -                                                            | -                                                    |
| 2.8   | Այլ պարտավորություններ                                                    | 27                 | 657,014                                                      | 767,251                                              |
|       | <b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>                                       |                    | <b>110,156,428</b>                                           | <b>116,693,838</b>                                   |
| 3     | Կապիտալ                                                                   |                    |                                                              |                                                      |
| 3.1   | Կանոնադրական կապիտալ                                                      | 28                 | 6,387,505                                                    | 6,387,505                                            |
| 3.2   | Էմիսիոն եկամուտ                                                           | 29                 | 1,947,880                                                    | 1,947,880                                            |
